

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԵՐ ՄԷԶ:

**Թէ,** և վաղուց տարածուած և ընդունուած է Պեստակոցու այն կարծիքը, թէ գաստիարակութիւնը պիտի սկսել օրօրոցից՝ հենց այն ժամանակից, երբ մանուկը աչքերը լայն բացած դիտում է իւր շրջապատը և պատրաստ է ընդունելու ամեն ինչ, որ կը տրուի նրանց բայց մենք մինչեւ այժմ չենք կտրողացել գոնէ մասամբ իրագործել մեծ մանկավարժի միաբը: Ընդհակառակն մեր ծնօղներն այն համոզումն ունին, թէ ուսումն ու գաստիարակութիւնը միայն դպրոցի պարտականութիւնն են, ուր պիտի սկիզբը գնել մըտաւոր զարդացման ու կաղմակերպել նրանց որդւոց բնաւորութիւնը: Աւստի պէտք է միշտ նորից յիշեցնել որ առաջին ու ամենամեծ գաստիարակութեան կենտրոնը ընտանիքն է, այն վայրը, ուր մանուկն առաջին անգամ սովորում է մայրենի լեզուի հնչիւնները, սովորում է օրօրոցի քաղցր երգերը և անմոռանալի կերպով գրոշմուռում ու մնում են նորա յիշողութեան մէջ իւր ծնօղների բարոյական խրատներն ու նոյն պատմած հեքիաթները, որոնք և անդրդուելի հիմնաքար են լինում նորա ապագայ ուսուցման համար: Պեստալոցցին մինչեւ իսկ խորհուրդ է տալիս փոքրիկ մանկան ականջին գեռ օրօրոցում եղած ժամանակ շարունակ կրկնել մայրենի լեզուի բոլոր հնչիւնները աւելի շուտ, քան թէ նա ընդունակ կը լինի դոցանից գոնէ մէկը արտասանելու, որպէս զի յաձախ կրկնելով՝ ընդ միշտ տպաւուեն նորա մաքի մէջ: Բայց ուր է այն հայ ընտանիքը, որի մէջ գոնէ մաքուր լեզուով խօսեն մանկանց հետ. ուր են այն հասկացող ծնօղները, որ իրանց նպատակ գնեն որդւոց գաստիարակութիւնը հենց ընտանիքից սկսելու: Մեր մէջ, ուր դպրոցական մանկանց ստուար մեծամասնութիւնը զիւղերից է հաւաքուում, այնպիսի գիւղերից, որոնք կամ զանազան ազգութիւնների խառն ընակութիւն են և կամ կենտրոնական քաղաքներից հարիւրաւոր վերստիր հեռու են զըտ-

նուռում՝ կանոնաւոր ընտանեկան դաստիարակութեան մասին խօսք լինել չի կարող. այնաեղ մանուկները մեծանում են ազատ ընութեան մէջ, նահապետական եղանակով՝ առանց ուղեցոյցի, առանց դաստիարակութեան, այնպէս ինչպէս պատահում է: Նատ անգամ կարելի է տեսնել նոյն խոկ ընտանիքներ, ուր մանկանց ականջին արդեն օրօրոցում օտար լեզու է հնչում. այսպէս օր. Վարաբաղի, նուխւոյ, նամախու և ուրիշ մի քանի տեղերի օրօրոցի երդերը և «լայլայները» երգուում են թուրքերէն լեզուով. և այդ երգերը փոխանակ բովանդակելու քաղցր յիշողութիւններ կամ մանկան մտքին հանկանալի իմաստներ՝ թուրքերէն մելամաղձիկ եղանակով են երգուում և տիսուր կամ երկիւղ ազգող բովանդակութիւն ունենում: Արոնեցէք այդ կողմերում, ու չէք կարող գտնել մայրենի մաքուր լեզուով օրօրոցի մի երդ, որը կարելի լինի հայի մտքի ծնունդ համարել և որ արտայայտէր հայ մօր կրած վիշտը կամ ուրախութիւնն ու բերկրանքը: Այս կողմից բացառութիւն են կազմում երեանեան նահանգի, Վարսի, մասամբ Ախալքալաքի և Ախալցխայի մի քանի տեղերը, ուր տարածուած են կրթիչ բովանդակութեամբ օրօրոցի երգեր: Այլազէս մեր մանուկները սնուում են ըստ մեծի մասին այնպիսի կենտրոններում, որ ոչ մի դատիարակութիւն ստանալ և բնաւորութիւն կազմակերպել չեն կարող. նոքա հասնում են 8—10 տարեկան հասակը, և մինչ այդքան ժամանակուայ ընթացքում լուսաւորուած երկրների մանուկներն առատ պաշար են ժողոված լինում թէ ուսման և թէ դաստիարակութեան համար նոքա համարեա կորցնում են անօգուտ, և կամ ձեռք և բերում այնպիսի մտապատկերներ, որոնց արմատախիլ անելու համար դպրոցը պէտք է ջանք գործ դնէ մի քանի տարի շարունակ: Դպրոցի ղեկավարին է մնում 8—10 տարի անցնելուց յետոյ նոր դաստիարակութեան սկիզբ զնել և պարաստել այդ մանուկներին ապագայ կեանքի համար: Այսպիսով մեր դպրոցներին է վերապահուած կատարել այն ծանր պատասխանառու գործը, որի մեծ մասը լուսաւոր երկրներում ընտանիքն է կատարում:

Խնչ վերաբերում է քաղաքացի մանկանց սկզբնական դաստիարակութեան, այսակեզ ևս տեսաբանը շաա միմիթառ բական չէ: Քաղաքներում ժողովուրդը բաժանուում է երեք գասակարգի: ա) չունեորներ, որոնք նոյն, գուցէ և աւելի վաս վիճակում են, քան զիւղացիները, և հետեապէս այսպիսի ընտանիքներում դաստիարակութեան մասին խօսք լինել չի կարող, քանի որ մանուկները թողնուած են իրանց կամքին, բ) միջին դասակարգ, որը բազկացած է վաճառականներից և արհեստաւորներից ու այնքան է զբաղուած իւր գործոց որ մոռացութեան է տալիս իւր որդւոց դաստիարակութեան գործը և կամ դպրոցին է յանձնում: զ) բարձր դասակարգ, որի մէջ դաստիարակութեան սկիզբը մանկան համար բոլորովին խորթ եղանակով է սկսուում: այդտեղ չի լսուում մայրենի լեզուն, մայրը չի ներշնչում մանկան իւր իսկական զգացումները դաստիարակութիւնը յանձնուած է բացառապէս օտար դաստիարակներին կամ դաստիարակչութիներին, որոնք մանկանց օտար հակացողութիւններ և օտար ըմբռնուումներ են մատակարարում և անհարազատ ու անպատգ դաստիարակութեան հիմք զնում: Նատ քիչ ընտանիքներում՝ կարելի է իսկական դաստիարակութեան հետքեր տեսնել, մնացած մեծամասնութիւնը զրեթէ, սրաբին մօտիկ ոշինչ շատանալով իւր ընտանիքից՝ սովորում է խորթ աչքով նայել այն միջավայրի ու շրջանի վերայ, ուր ծնուել և սնուել է: Այսպիսի մանուկները ապրելով քաղաքներում և դիտելով իրանց շուրջը, կարող են տեսնել ուրիշ շրջան, ուրիշ միջավայր, թշուառութիւն, հալածանք ևն, բայց բոլորովին անտարբեր են մնում և խորթ, որովհեաւ նրանց ստացած ձեւական կրթութիւնը կարում է նրանց այդպիսի շրջաններից՝ այն ամեն արտաքին տպաւորութիւնից, որ կարող է նրանց միտքը բազմակողմանի կերպով զարգացնել և նրանց հակացողութեան հորիզոնն ընդարձակել:

Այսպիսի տարբեր շրջաններից ու վայրերից ահաւ տարբեր կրթութեան աստիճանով (եթէ կարելի է կրթութիւն համարել նոցա մի քանի հատուկառ տեղեկութիւնները) մանուկները դպրոց են գալիս ուսման համար: Ճշմարիտ որ

Հավագանց գժուար կործ է այդպիսի պաշարով մանկանց հետ սկսել զաստիարակութիւնը՝ գաստիարտկութիւն ոչ թէ վերացական պատմութիւններով և խրառներով, ինչպէս սովորաբար տեղի է ունենում մեզանում, այլ այնպիսի միջոցներով, որ կարող է նոցա բնաւորութիւնը կազմակերպել և որ նոցա գրգում է անդուլ ինքնուրոյն գործունեութեան որովհեակ, ինչպէս Ֆելիքրերդն է ասում՝ «աշակերտի անհատական անկախ զործունեութիւնը անհամեմատ աւելի օգուած է տալիս քանի թէ այն պարսների հոգատար ծառայութիւնը, որոնք իրանց վերայ են առնում զաստիարակի պաշտօնը»։ Բայց գժբախտաբար գպրոցի վարիչներն էլ շատ անդամ չեն հսկում իրանց նպատակին, նոքա չեն դաստիարակում, մորդիկ չեն պատրաստում հաստատուն բնաւորութիւններ կրթում, այլ սովորեցնում են միայն դասեն տալիս ուստի և մենք չենք ունենում զազափարի համար մարտնչող մարդիկ, այլ այնպիսիներ, որ գպրոցից գուրս են դալիս կեաների հոստիքի հետ գնալու համար։ Հենց առաջին օրերից ուսուցիչները մանուկներին պատմում եւ սովորեցնում են, որով և բժմացնում են նոցա մլջ ինքնուրուն զործելու և աշխատելու կարեւոր յատկութիւնը։ Հօրացիոս Վէնին տում է, «Գժբազզարար ներկայում մանուկների զաստիարակութիւնը մլր մլջ առաւելապէս այն ուղղութիւնն ունի, որ նրանց այնքան չեն սովորեցնուած, որքան պատմում են»։ Վիտի աչքի առաջ ունենալ, որ «աշշակերտը միշտ աւելի լաւ է մոռում պահում այն ինչ որ ինքն է, ձեռք բերել մատոր վարժութեամբ, քան թէ այն ինչ որ ուրիշներն են պատմել, ասում է Վարսէլն»։

Մենք ունենք շատ ուսուցիչներ, բայց շատ քչերը դացանից արժանի են գուազիարակ կոչուելու, նոքա մեծ մասամբ զաստիարակութեան համար չեն պատրաստուում ու գորակարիքն էլ չեն զգում։ Գաստիարակութեան գործը կազ է զնում, զուցէ և մոռացութեան է մասնուում այն պատճառով, որ ուսուցիչներն իրանց կոչուած են համարում միայն դաս տալու, իսկ զաստիարակութիւնը համարում են մի առանձին պաշտօն, որ ուրիշ մարդիկ պիտի ստանձնեն։ Ետ

յաճախի են պատահում այսպիսի գեղքեր, ելք աշակերտը գիմնում է մի որեւէ ուսուցչի՝ նորան գանգատությով իւր ընկերների զանցառութեան կամ՝ մի այլ անկարգապահութեան համար, ուսուցիչը փոխանակ տեղին ու անզը դործին վերահասու լինելու և կարեւորը կարգադրելու՝ թողնում է անկատարչ անելով թէ, զա դաստիարակի դործն է, և այս պիտով որբան հակառութիւններ, որբան ձեւականութիւններ են աւելի ունենում, ի վեաս դաստիարակչակոն դործին: Երօք ամեն մի ուսուցիչ դործ ունի դաստիարակութեան հետ դաստիարակելով պիտի ուսուցանել, պիտի աշակերտին և՝ զարգացնէ և՛ կեանքի համար պատրաստէ, առանց դորան ուսուցումը իւր նպատակին չի կարող հասնել: Ապա թէ, ոչ ուսուցիչներից շատերը նայում են իրանց վրայ իրեւ վարձու պաշտօնեայի, որ անարբեր կերպով պիտի իւր դասն աւանդէ և նոյնը պահանջելով աշակերտներից՝ թուանշան զնէ: Խսկ թուանշան զնելը, որ աշակերտների համար՝ անսպառ անախորժութեան աղբիւր է եղել միշտ և այն հասկցողութիւնն արմատացրել փոքրերի մէջ, թէ իրանք սովորում են միայն լաւ թուանշան ստանալու համար՝ բոլոր բովին դժուարացնում է դաստիարակութեան դործը և յեղյեղուկ զարձնում: Դա մի չարիք է, որի սուածն առնելու համար դործ դրած ամեն միջոց զեռ ևս նպատակի չի հասցրել: Ակած 8-ից մինչեւ 20, 25 տարեկան տղաները կարծէք մի տեսակ գերի են թուանշաններին: Նատ անգամ թուանշանները պատճառ են լինում, որ աշակերտներից ումանք յուսահատուում են սովորելուց. Խսկ ուրիշները դառնում են ինքնահաւատան: Խսկական դաստիարակութիւնը մի կողմը պիտի զնէ որչափ հնարաւոր է այսպիսի ձեւականութիւններ, որ ակամայից ենք պահում, և դործով ցոյց տայ, թէ աշակերտները սովորում են ու դաստիարակուում ապագայում լաւ քաղաքացիներ և պիտանի մարդիկ լինելու, թէ նոքա դաստիարակուում են ազնիւ ձգտումներով կեանքի մէջ սուրբ գաղափարի համար մարտնչելու, թէ առանց իդէալից տռանց բարձր ձգտումների կեանքն ունայն ու տաղակալի կը լինէ:

Մեծ նշանակութիւն ունի դաստիարակութեան գործում և ուսուցչի անձնաւորութիւնը՝ որովհետեւ աշակերտների և ուսուցչի յարաքերութիւնը լինում է բարեկամական, երբ մի ուսուցիչ կարողանում է, զբաւել նրանց, հեղինակութիւն ձեռք բերել, և թշնամական՝ երբ նա սխալ դասաւանդութեան կամ այլ պատճառով չի կարողացել հեղինակաւոր գառնալ։ Առհասարակ ինչպէս հասակաւոր մարդիկ, այնպէս էլ աշակերաներն իրանց ապաւորութիւնների գերին են, ուստի այն ուսուցիչները, որոնք ամենայն օր աշակերաններին տհաճութիւն են պատճառում, անշուշտ տտելութիւն առաջ կը բերեն, իսկ նոքա որպնք իսկական դասահարակ են հանդիսանում, օգնում մանուկներին մասաւորապէս առաջ դնալու, յորդորում աշխատանքի և նրանց յաջողութիւնը խրախուսում՝ զբաւում են աշակերանների անիկեղծ համակրութիւնը, ինչպէս որ իրաւացի կերպով նկատում է Հ. Սպենսեր։ Մեր գորոցներում շատ քիչ ուշողրութիւն են դարձնում ինքնուսուցման գործի վերայ, մասնաւանդ սկզբնական ուսուցման միջոցին, որը ուսուցիչը բացառապէս ինքն է, իւր վերայ առնում և աշակերաններին մեծ մասամբ կրառորական գեր առջիս՝ այս է պատճառը, որ հետագայ տարիներում ևս աշակերանները ինքնուրոյն շատ քիչ բան են կարողանում անել. Նոքա վարժուած չեն լինում գործելու առանց ուրիշի օգնութեան։ Սպենսերի պաշտպանած առաջին խնդիրն այն է, որ սովորեցնենք աշակերաններին ինքնուրոյն մասածելու, իւրացնելու և գործադրելու սովորածը. սորան օգնում են ուսուցման մի քանի առարկաները, ինչպէս հայրենազիտութիւնը, բնական պատմութիւնը, աշխարհագրութիւնը են։ Եթէ մենք ուշադրութիւն դարձնենք այս բոլոր պայմանների վերայ, կարող կը լինենք հիմնաւոր դաստիարակութիւն տալ և կամաց կամաց ինքնուրոյն բնաւորութիւն կազմակերպելու սկիզբ դնել. հակառակ գելուքում՝ մեր աշակերանները կեանքի մէջ կը մանեն առանց ինքնուրոյն գործելու և ինքնուրոյն մասածելու ընդունակութեան։ Այսպէս է որոշում Հ. Սպենսերը դաստիարակութեան ուղիղ սկզբունքները. «Յնօղները և ուսուցիչ

ները ամեն կերպ պէտք է աշխատեն նպաստելու մանկանց ինքնազարգացման որ նոքտ իրանց սեպհական փորձերն անեն և եղբակացութիւն հանեն. պէտք է, որքան կարելի է, քիչ պատմել և ստիպել նրանց որ իրենք պատասխան դանեն: Մարդկութիւնը տառաջ է զնայել միայն ինքնակրթութեան միջոցաւ, և թէ կեանքի մէջ յառաջադիմութեան մէծ քայլեր անելու համար իւրաքանչիւր մարդու միաք պէտք է զարգանց մասամբ նոյն ճանապարհով այդ միշտ հաստատուում է ինքնուս մարդկանց զարմանալի յառաջադիմութեամբ:

**Ա. Շահնազարեան.**



## ՄԵՐ ՄԱՄՈՒԼ.

**Մ**ի թոռուցիկ ակնարկ ձգելով մեր ծեռքի տակ եղած թերթիրի վերջին համարների վերայ՝ պէտք է փորձենք հարեւանցօրէն զաղափար տալ ընթերցողներին, թէ ի՞նչ վիճակի մէջ է այժմ հայ մամուլը: — Առաջին տեղու կվայելէ հարկաւ հինաւորց «Քազմավէսպ»ին, որի պահնեալ երեսը վաղուց շենք տեսել, սայց վերջին մի քանի շաբաթուայ մէջ երար ետեւից ստացանք նոյեմներ, դեկտեմբերը, — մարտ տետրակները: Այդ տետրակների ծիշտ ներքին նկարագիրը տալ նոյնչափ դժուար գործ է, ոքչափ դժուար է նոցա խմբագրող կաթոլիկ հոգեւորականների ներքինը նկարագրել. ուստի ստիպուած ենք աւելի արտաքին տարագը նկարագրելով քաւականանալ: — Ինչպէս յայտնի է, կաթոլիկ հոգեւորականութիւնը խիստ բազմազան տարագունիք կարելի է ասել, չկայ տարագ աշխարհիս երեսին, որի